«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

Առարկան՝Հայ գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝Նունե Ազարյան

Ուսումնական հաստատություն՝Ախթալայի թիվ. 2 միջնակարգ դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն……էջ 3

«Սասնա ծռեր» էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում……էջ 4-15

Հետազոտության ընթացքը…… էջ 10-13

Եզրակացություն……էջ 16-17

Գրականության ցանկ……էջ 18

Ներածություն

«Սասնա ծռեր» էպոսը հայ ժողովրդի արհավիրքներիով լի կյանքի պատմությունն է, նրա կենսահայեցողության ու փիլիսոփայության հավերժ կենդանի գիքրը, մատյան հերոսությանը: Ոչ մի աղբյուրից չի կարելի այնպես կենդանի ու ամբողջության մեջ ճանաչել ժողովրդին, ինչպես բուն էպոսից: Այսպիսով էպոսը մի հայելի է, որի մեջ արտացոլվում է տվյալ ժողովրդի հոգու պատկերը: Մեր էպոսում մարմնավորվել են հայ ժողովրդի մաքառումներն ու վսեմ գաղափարները: Այն ոչ միայն մի գեղեցկագույն կոթող է, դյուցազունների մի չքնաղ վիպերգ, այլև սերունդներին հայրենասիրություն ու հումանիզմի, աշխատանքի ու աշխատասիրության ոգով դաստիարակելու հանրագիտարան: Այս իմաստով բացառիկ է «Սասնա ծռեր» էպոսի դերը մեր հոգևոր մշակույթի պատմության մեջ:

Արժեքային համակարգի սաղմերը «Սասնա ծռեր» դյուցազներգության հերսոների բարոյական նկարագրի մեջ են խտացված: Ազնվություն, վեհանձնություն, ճշմարտություն, ազատասիրություն ու հայրենասիրություն, ահա այն բարձր գաղափարները, որոնք հատուկ են հայ մարդուն, և որոնցով նա հավասար իրավունքներով իր տեղն է զբաղեցնում համամարդկային արժեքներով հարուստ կլոր սեղանի շուրջ նստած աշխարհի մյուս ժողովուրդների կողքին: Ազատասիրությունը, հայրենասիրությունը, անկախության ձգտումը և արդար գոյամարտի գաղափարը Սասնա հերոսները, նրանց նախորդները և հետնորդները ժառանգել են Հայկ Նահապետից: Այս բարոյական գծերը հայ ժողովրդի արյան մեջ են և հոսում են նրա երակներով: Էպոսի գլխավոր նպատակներից մեկն էլ մարդասիրության դաստիարակումն է: Այսպիսով սերմանել երեխաների, ինչպես նաև մեծահասակների մեջ հայրենասիրական գաղափարախոսությամբ, բացատրել, որ կան սրբություններ, որոնք հնարավոր չէ համեմատել ոչ մի բանի հետ: Դա հայրենքին է, որդիական հավատարմությունը, նվիրվածությունը այն հողին, որտեղ ծնվել ես և ըմբռնել ինքդ քեզ, այն ժողովրդին, որը սնել ու աճեցրել է քեզ:

Էպոսի միջոցով կարող ենք ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները: Էպոսի հերոսների մասին պատմությունները սովորեցնում են աշխարհը տեսնել հայրենասերի աչքերով և դաստիարակում է այն ժամանակ, երբ հիացմունք է պատճառում այն մարդը, որը հասել է բարոյական արիության բարձունքին: Էպոսում փառաբանվում է այն անհատը, որը հանուն հայրենիքի պատրաստ էր զոհել իր կյանքը, և ի հավելումն այդ գաղափարի՝ սրբազան է համարվում որևէ ժողովրդի՝ հանուն իր ազգային ազատության ու անկախության նվաճողների դեմ ուղղված պատերազմը:

«Սասնա ծռեր» էպոսի դարավոր պատմությունն ապացուցում է, թե ինչպես է բանահյուսական այդ գանձը դարեր ի վեր ոգևորել հայ ժողովրդին, իշխել նրա մտքի ու սրտի վրա և հասել նոր ժամանակներին ու այսօր էլ իր գաղափարներով խիստ այժմեական է և հուզիչ:

«Սասնա ծռեր» էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում

«Սասունցի Դավիթ» կամ «Սասնա ծռեր» էպոսը հայտնաբերողը եղել է հայ բանագիտության մեծ երախտավորը՝ Գարեգին Սրվանձտյանցը :[1]

1874 թ. Գարեգին Սրվանձտյանի «Գրոց և բրոց» գրքում հրատարակած հայ ժողովրդական էպոսի անդրանիկ տարբերակը «Սասունի Դավիթ» կամ «Մհերի դուռ» խորագրով հեղինակի առաջաբանով հանդերձ՝ դարձավ էպոսագիտության հիմնաքարը: Իր սրբազան նպատակը նա շարադրել է «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» գրքույկի ծրագրողի խոսքի մեջ: «Գրոց ու բրոց» ուշագրավ խորագիրն ազդարարում է հեղինակի թարմաշունչ ու նոր դիմումի արտասովոր բնույթը: Իր հիանալի գրքույկը Գ. Սրվանձտյանցը համարում է յուրօրինակ նվեր ողջ հայ ժողովրդին. նրանում հավաքված նյութերը ներկայացնում են հայի ոգին, հողը, ջուրը, այն ամենը, ինչը հային պահում է հայ: Չէ՞ որ դարեր ի վեր բռնակալները հազար ու մի խորամանկությամբ փորձել են արմատախիլ անել հայ ազգին, ջնջել նրան աշխարհի երեսից. «Անկարելի է գտնել աշխարհ մը և ազգ մը, որ համեմատվի հայուն և յուր երկրին, որ այնքան ավեր, մահ, սուր, ուրացություն, արյուն, գերություն կրած լինի, ու նորենցայսօր ապրի»:[2]

1889թ. Մ. Աբեղյանի գրառած նորահայտ «Դավիթ և Մհեր» պատումը ոչ միայն արդարացրեց Գ. Սրվանձտյանի կանխատեսումները, այլև էպոսի հետագա ուսումնասիրության նոր ուղիներ հարթեց, գիտականորեն հիմնավորեց պատումների համեմատական քննության անհրաժեշտությունը: Ամբարված նյութը հնարավոր դարձրեց հրատարակել էպոսի թե՛ գրառված տարբերակների գիտական տեքստը («Սասնա ծռեր») և թե՛ համահավաք բնագիրը: («Սասունցի Դավիթ»): «Սասունցի Դավիթը» ճանաչման արժանացավ, թարգմանվեց, արժևորվեց, սակայն պատումների համեմատական քննությունը շարունակում էր մնալ էպոսի գիտական ուսումնասիրության գերխնդիր «Հայկական էպոսը», - գրել է Հովհ. Թումանյանը,- հայ ցեղի ապրած կյանքի ու հոգեկան կարողությունների հոյակապ գանձարանն է ու իր մեծության անհերքելի վկայությունը աշխատանքի առջև»: [3] Ազատասիրությունն ու հայրենասիրությունը, որ մեր առասպելաբանության և «Սասնա ծռեր» դյուցազներգության գլխավոր գաղափարներն են, հայ դպրոցականը պիտի ընկալի այն տեսանկյունով և այնպիսի մոտեցումով, որ բարոյական այդ արժեքները դեպքից դեպք դրսևորվող երևույթներ չեն: Դրանք հայ մարդու հոգու մեջ են, ուղեկցում են նրան ողջ գիտակցական կյանքում, պարզապես առավել վառ և տեսանելի արտահայտվում են պայքարի, հայրենիքի ազատության ու անկախության համար թշնամու դեմ մարտնչելու ընթացքում: Ատելությունը չէ առաջնորդողը, ատելությունը կուրացնում է մարդուն, ժողովրդին: 9-րդ դարում հայ ժողովրդի հերոսական պայքարը հասավ իր լարվածության բարձրակետին: Անկախության ու ազատության երազանքով ժողովուրդը կռվի ելավ օտար կեղեքիչների դեմ:

---

[1] Գարեգին Սրվանձտյանց անուն-ազգանունը բանագետը ստացել է 1857թ., երբ սովորում էր Խրիմյան հայրիկի հիմնած Վարագա վանքի ժառանգավորաց վարժարանում «Այստեղ նա առաջին անգամ կարդում է Եղիշեի «Վարդանանց պատմությունը» խանդավառվում Վարդանանց քաջերի հերոսական սխրանքներով: Այստեղ էլ նա փոխում է իր մկրտության անուն-ազգանունը և Վարդան Մամիկոնյանի անվեհեր զինվորներից մեկի՝ Գարեգին Սրվանձտյանցի անուն-ազգանունով, իրեն կոչում Գարեգին Սրվանձտյանց» (Տե՛ս Գ.Սրվանձտյանց, Երկեր, հ.1, Երևան, 1978, էջ 8);

[2] Նույն տեղում, էջ 29

[3] Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1959, էջ 357:

Ազատագրական այդ պանծալի պայքարը արտացոլվեց ժողովրդական երևակայության հայելում՝ իր ողջ գեղեցկությամբ ու մարդկայնությամբ։ Հավաքելով հազարամյակների ընթացքում իր ստեղծած առասպելները, երգերն ու զրույցները՝ հերոսության, ազնվության, աշխատանքի ու հումանիզմի մասին, ժողովուրդը արաբական զավթիչների դեմ մղած պայքարի հորձանոտում, սքանչացած իր հերոս զավակների սխրանքներով, կերտեց անմահ «Սասնա ծռեր» էպոսը։

«Սասնա ծռեր» էպոսը մտնում է համաշխարհային կուլտուրայի շրջանակի մեջ դառնում է մարդկության հերոսական մեծ էպոսի մի մասը «Իլիականի» և «Ոդիսականի», ռուս ժողովրդի դյուցազնական էպոսի, «Կալեվալայի» և Հյուսիսի սագաների և ժողովրդական ստեղծագործության բազմաթիվ այլ գանձերի կողքին։ Դյուցազնավեպում իշխող անկեղծության, ներքին մաքրության և դեպի հայրենիքը, աշխատանքն ու աշխատավոր մարդը ունեցած բուռն բարոյական վսեմ սկզբունքներ՝ դարերի շղթայի միջով հասել են մինչև մեր օրերը։

Ժողովուրդը սեփական հոգու բարեմասնություններն ու խիզախումները մարմնավորում է իր իդեալ-հերոսի մեջ։ Հերոսը դառնում է հավերժական կենդանի այն հուշարձանը, որի արարքների, որի մարդկայնորեն բաբախող սրտի վրա ժողովուրդը անեղծանելի ու հրե տառերով քանդակում է հայրենասիրական վեհ գաղափարները, վաղվա լավ օրվա իր երազանքներն ու բարոյական վսեմ սկզբունքները։ Եվ այդ բոլորը էպոսում պատկերված են արվեստի հնարանքներով։

«Սասնա ծռերը» հայ ժողովրդի պատմության մի էպիզոդ չէ, այլ նրա պատմությունը։ Որքան մեծ է նրա հոգեկան ու մտավոր կուտակումը, այնքան մեծ է կենսափորձի արդյունք է այն։

Օրինակ՝ «Սիդ» էպոսում նկարագրված է իսպանական ժողովրդի պայքարը արաբ բռանակալների դեմ, իսկ «Սասնա ծռեր»-ում պատկերված է հայ ժողովրդի հերոսական պայքարը նույն կեղեքիչների դեմ։ Երկու դեպքում էլ ժողովուրդները հերոսական պայքար են մղել ազատության, ազգային ինքնության և իրենց պատմական իրավազորության համար. Ուրեմն՝ տարբեր ժողովուրդներ, կռվելով միևնույն թշնամու դեմ, նույն էպոխայում ստեղծել են տարբեր էպոսներ։ Եվ էպոսներից յուրքանչյուրում հանդես է գալիս այդ էպոսն ստեղծող ժողովուրդը իր առանձնահատուկ գծերի ամբողջությամբ։

Հայկական էպոսի մեջ արտացոլված է հայ ժողովրդի ազգային աշխարհը՝ իր բովանդակ հայրենասիրությամբ, իսկ հունական և իսպանական էպոսներում՝ հունական և իսպանական ժողովուրդների աշխարհները։

Կ.Մաքսը, նման հանգամանքը նկատի ունենալով, գրում է.

«Եգիպտական դիզաբանությունը երբեք չէր կարող հող կամ մայրական գիրկ լինել հունական արվեստի համար»։

Էպոսում ժողովուրդը արտաքին թշնամիների դեմ մղած հերոսական ու անհավասար պայքարի միջով մեր օրերն է հասցրել հայրենիքի հանդեպ բուռն սիրո, ազատության ու անկախության, ժողովրդի փայփայած բարոյական վսեմ սկզբունքները։Էպոսը կոչվում է «Սասնա ծռեր», «Ծուռ» բառը հայերենում ունի մի քանի նշանակություն՝ դիվահար, խենթավուն, խելահեղ քաջ, և իմաստային այս տարբերակներից յուրաքանչյուրը էպոսի հերոսների համար բնորոշ է նրանց կյանքի այս կամ այն պարագայում։

Էպոսն անվանում են նաև «Ջոջանց տուն», այսինքն՝ «Մեծերի տուն», «Ավագների տուն» (տարիքով և դիրքով ավագների), «Հսկաների տուն»:

Կա ևս մի անուն՝ «Քաջանց տուն», որ նշանակում է «քաջերի տուն» կամ դրսևորում է էպոսի առողջությունը քաջքերին, ոգիներին վերաբերող մի շարք ավանդությունների հետ: Այդ քաջանց տոհմին պատկանող կանանցից է ծնվում հերոսների երեք կրտսեր սերունդ:[4]

«Սասունցի Դավիթը» բարձրարվեստ ստեղծագործություն է: «Սասունցի Դավիթ» էպոսը ձևավորվել է VIII-X դարերում, երբ հայ ժողովուրդն օրհասական կռիվ էր մղում արաբ նվաճողների դեմ: Արաբների՝ դեպի Հայաստան կատարած առաջին արշավանքները նկարագրում է Սեբեոսը: Սակայն էպոսի ձևավորման համար առավել կարևոր են VIII և IX դարերի մի քանի հուժկու ապստամբությունները, որոնք հայ ժողովուրդը մղել է արաբական լծի դեմ: Ամենահուժկու ապստամբությունը բռնկվել է 774-775 թթ. և ցնցել ամբողջ խալիֆայությունը:[5]

Այս ըմբոստությունն ավարտվում է հայերի պարտությամբ: Հայերի հաղթանակով է ավարտվում խութեցիների ապստամբությունը, որը տեղի է ունեցել 851 թվականին: Այդ ապստամբությունը մանրամասն նկարագրել է Թովմա Արծրունին:[6]

Ղևոնդ պատմիչը նկարագրում է, թե ինչպես արաբական խալիֆաթը դաժանորեն ոչնչացնում էր հայ նախարարներին՝ պարզորեն հասկանալով, որ միայն նախարարների ջանքերով էր հնարավոր վերականգնել հայկական պետականությունը: Նրա արվեստի տարրերը լայնորեն կապված են բանահյուսությանը հատուկ պոետիկայի հատկանիշների հետ: Արաբների զորքի գլխավորը՝ Մահմետը, Հայաստանի նախարարներին իրենց հեծյալներով կանչում է իր մոտ, լցնում Նախիջևանի և Խրամ ավանի եկեղեցիները, փակել տալիս դռները և հրկիզում: Այդ դեպքերը տեղի են ունեցել VIII դարի սկզբին (705թ.) և հայտնի են Կրակի տարի անունով. «Նախճիվանի և Խրամի բարբարոսական գործողությունների նկարագրությունը տալիս են ոչ միայն հայ, այլև բյուզանդացի, ասորի և արաբ պատմիչները»:[7] «Սասունցի Դավիթ» էպոսի պատմական հիմքի իմացությունը շատ կարևոր է ուսուցանողի համար, որովհետև իր հարուստ գիտելիքներով նա հիմնավորում է ասելիքը: Հայկական էպոսը լի է չափազանցություններով, և այս առումով այն մոտ է և՛ հնագույն առասպելներին, և՛ հրաշապատում հեքիաթներին: բանահյուսական գործերում խախտվում են ժամանակի ու տարածության չափանիշները: Դրա դրսևորումները տեսնում ենք «Սասունցի Դավիթ» էպոսում: Օրինակ՝ Քեռի Թորոսը ապրում և գործում է էպոսի բոլոր ճյուղերում և իր խորհուրդներով ընթացք տալիս դյուցազունների արարքներին:

---

[4]Հ. Օրբելի, Հայկական հերոսական էպոսը (հատվածներ), Հայ գրականության քրեստոմատաի, Երևան, 1992, էջ 105

[5] Հայ ժողովրդի պատմություն, հ.II,Երևան,1934, էջ 243:

[6]Տե՛ս Թովմաս Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, էջ 135-138:

[7] Ղևոնդ,Պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթությունը Ա.Տ.Ղևոնդյանի, Երևան, 1982,էջ 147:

Նրան հանդիպում ենք և՛ Ծովինարի ամուսնության ժամանակ, և՛ Փոքր Միհրի ծնունդի դրվագում: Քուռկիկ Ջալալին էլ գործում է բոլոր ճյուղերում ու վերջում էլ մնում անմահ: Էպոսում շատ-շատ են կրկնակները (ռեֆրենները): Հաճախ կրկնվում են յոթ,քառասուն, հազար թվերը: Կոզբադինը Մսրա Մելիքից պահանջում է իրեն տալ հազար փահլևան, որպեսզի Սասունից բերվող հարկի հետ Մսր բերի նաև.

Քառսուն էրկեն կնիկ բերեմ՝ ուղտեր բառնան,
Քառսուն կոլոտ կնիկ բերեմ՝ էրկանք աղան,
Քառսուն ազապ աղջիկ բերեմ քեզ արմաղա՛ն:
Քառսուն արջառ, քառսուն էրինջ,
Քառսուն ուղտու բեռով արծաթ,
Քառսուն ուղտու բեռով ոսկի՛ բերեմ – քե խա՛րջ,
Սասուն անեմ առ ու թալան:[8]

«Սասունցի Դավիթ» էպոսը լի է հայ ժողովրդի հավաքական մտածողության մեջ եղած իմաստուն մտքերով, նաև առած – ասացվածքներով: Ահա երկու օրինակ՝

1. «Աշխարհ գութանի մոտ կլիանա» (էջ 261):
2. «Ասաց.- Դու քո հոր կտրիճն ես, ես էլ իմ» (էջ 269):[9]

Էպոսի արվեստի ցուցիչներից է նաև կերպարների բազմազանությունն ու նրանց իրական և անմոռաց անհատականություններ լինելը:

Երկու հիմնական հակառակորդներն են Փոքր Մսրա Մելիքը և Սասունցի Դավիթը, որոնք Մեծ Միհրի որդիներն են: Նրանք նման են իրենց հսկա ուժով, պարզապես շատ տարբեր են մարդկային առաքինություններով:Մսրա Մելիքը Սասունցի Դավթի հակապատկերն է իր դաժանությամբ, նենգությամբ ու չարությամբ: Ողջ երրորդ ճյուղը հարուստ է Մելիքի ստոր արարքների նկարագրությամբ: Մելիքը նույնիսկ զորահավաքի հրամանը գրում է ոչ թե մելանով, այլ սեփական արյունով.

Իրեք կողմըն աշխարհի Մըսրա Մելիքի ձեռն էր.
Մենակ մե՛կ կողմն աշխարհի Դավթի հայրենիքն էր.
Մելիք կանչեց, իրեն իշխաններ ժողովեց,
Հետո բերավ, տաշտ մի դրեց իրեն առջև,
Ածելի զարկեց իրեն ճակատին,
Արուն թափվեց, տաշտ լցրեց:
Բացեց Մելքի մեկ թուղթ,
Էն արնով գրեց զորականչ:(էջ 217)

«Սասունցի Դավիթ» էպոսում հայ ժողովուրդն օգտագործել է հումորն ու սպանիչ սարկազմը:

---

[8] «Սասունցի Դավիթ», Երևան, Հայպետհրատ, Ճյուղ III,Մաս Ա, Դավիթը պատուհասում է Մըսրա Մելիքի հարկահաններին,1961թ., էջ 204

[9] «Սասունցի Դավիթ», Երևան, Հայպետհրատ, Ճյուղ III, Մաս Բ,Դավիթ և Խանդութ, Դավիթի ամուսնություն,1961թ., էջ 261-269:

Նշանավոր ռուս գրականագետ Պավել Սակուլինը (1868-1930), որը Խորհրդային Միության Գիտությունների ակադեմիայի իսկական անդամ էր, իր «Наука о литературе,ее итоги и перспективы» գրքի «Проблема читателя» բաժնում գրում է. «Համընդհանուր ռուս գրականության պատմությունը բազմաթիվ օրինակներով կարող է նկարագրել գրականության իշխանությունը սրտերի և մտքի վրա»: [10]«Սասունցի Դավիթ» էպոսի դարավոր պատմությունն ապացուցում է, թե ինչպես է բանահյուսական այդ գանձը դարեր ի վեր ոգևորել հայ ժողովրդին, իշխել նրա մտքի ու սրտի վրա և հասել նոր ժամանակներին ու այսօր էլ իր գաղափարներով խիստ այժմեական է և հուզիչ: Ուսուցիչը պարտավոր է այնպես ներկայացնել էպոսի գլխավոր կերպարներին, որ նրանք ազդեն աշակերտի, նաև ուսանողի սրտի ու մտքի վրա: «Филологический анализ художественного текста» գրքում խորհուրդ է տրվում գեղարվեստական բնագիրը կարդալ դանդաղ և ներթափանցել նրա իմաստային խորքերը, որովհետև կենտրոնացած և ուշադիր ընթերցումը երևան է հանում բնագրի դժվար հատվածները և անհասկանալի մասերը դարձնում է հասկանալի:

[10] П.Н.Сакулин, Наука о литературе, ее итоги и перспективы, Москва, 2011

Հետազոտության ընթացքը

Դասի պլան 1

Դասարան՝	9-րդ
Առարկա՝	Հայ գրականություն
Մյուս առարկանները՝	ա) Հայոց պատմություն
	բ) Աշխարհագրություն
Տևողությունը՝	45 րոպե
Թեմա՝	Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում.

1. *Դասի նպատակները*
   - Վերհիշել ժողովրդական դյուցազներգությունը։
   - Հարստացնել իրենց գիտելիքները էպոսի մասին ընդհանուր պատկերացում կազմելով։
   - Կառուցել նկարագրական, գեղեցիկ խոսք։

-Վերջնարդյունք

[11] Н.М.Шанский, Ш.А.Мамедов, Филологический анализ художественного текста, Москва, 2010

Աշակերտները կարողանում էին ներկայացնել էպոսի ճյուղերը և դրանց բովանդակությունը, բայց թերանում էին էպոսի մշակողների մասին տեղեկություններով:

-Գնահատական
Միավորային գնահատական

-Մեթոդներ
- Հարցման կամ հարցազրույցի մեթոդը,
- Տեսական մեթոդներից՝ վերլուծություն համդրման, համեմատման, ընդհանրացման:

Ռեսուրսներ
- Թղթե գունավոր և ճերմակ
- Մատիտներ,
- Համակարգիչ, սահիկաշար, դիագրամ և պատկերներ

2. *Դասի ընթացք*

Խթանման փուլ
- Իմաստի ընկալում և կշռադատում

Դասի սկզբում մտագրոգ մեթոդի միջոցով ուսուցիչը սկսում է դասը:

Ուսուցիչը գրատախտակին գրում է «էպոս» բառը և առաջարկում այն լրացնել ցանկացած բառով, որը առաջինը գալիս է աշակերտների մտքին:



Ուսուցիչը սկսում է դասը հարցերի միջոցով:
-*Հարց ու պատասխան*
-Այն ո՞ր հերոսն է, որը դարձել է հայ ժողովրդի հավաքական կերպար և մահացել է թունավոր նետից:
-Ի՞նչ գիտենք այդ հերոսի մասին նախորդ դասարաններից:
Առաջարկվում է դասագրքից կարդալ այն հատվածները, որոնք մշակել է Հովհ. Թումանյանը:
-Հիշե՛ք, թե քանի ճյուղից է բաղկացած էպոսը:

Աշակերտ – «Սասունցի Դավիթը» էպոսում չորս սերնդի պատկանող հերոսներ են, միմյանց լրացնելով, միասին մի ամբողջություն կազմելով, արտացոլել են հայ ժողովրդի պատկերացումները և նվիրական երազանքները:

-Ինպե՞ս ենք բնութագրում այդ հերոսներին:

Աշակերտ- Նարանյք կենդանի մարդիկ են՝ օժտված արիությամբ, հայրենասիրությամբ ու բարձր հատկություններով, սակայն իրենց մեջ կրում են նաև մարդկային թուլություններ:

Ահա այս նկարագրությունից հետո դասագրքից ընթերցում են հատվածներ և սեփական բառերով փորձում վերաշարադրել այն:

3. Իմաստի ընկալում

«Սասնա ծռեր» էպոսը արաբական խալիֆայության դեմ մղվող հերոսական պայքարի մասին է: Հայ ժողովուրդը դարերի ընթացքում ստեղծել է բազմաթիվ դյուցազներգություններ, որոնց մեջ առավել նշանակալիցը, մեծն ու բազմաբովանդակը «Սասնա ծռեր» էպոսն է, որը ձևավորվել է 8-10-րդ դարերում: Այնուհետև նա, փոխանցվելով սերնդից սերունդ, ապրում է բազում դարեր և մեզ հասնում մի շարք ճյուղերով, որոնք հավաքում ու հրատարակում են Գ. Սրվանձտյանը (1874) և Մ. Աբեղյանը (1889):

«Սասնա ծռեր» էպոսի ճյուղերն են՝

- «Սանասար և Բաղդասար»
- «Մեծ Միհր»
- «Սասունցի Դավիթ»
- «Փոքր Միհր

Որոնք սերտորեն կապվելով իրար հետ, կազմում են մի ամբողջություն:

«Նիբելունգների երգը» (գերմ.՝Das Nibelungenlied), գերմանական ազգային էպոս, որն անվանվում է նաև «պոեմ»՝ գրված անհայտ հեղինակի կողմից 12-րդ դարի վերջում և 13-րդ դարի սկզբում: Այն դասվում է աշխարհի էպիկական ամենանշանավոր ստեղծագործությունների շարքը:

“Գիլգամեշ» Շումերա-բաբելոնական հերոսական էպոսի պայմանական անվանումն է: Գիլգամեշի մասին էպիկական երգերն առաջացել են մ.թ.ա. 3-րդ հազարամյակում:

Երգ Ռոլանդի մասին (ֆր.՝ Chanson de Roland), ֆրանսիական միջնադարյան դյուցազներգություն (1100-1125 թթ.)։ Հիմքը կոմս Ռոլանդի անձնուրաց սխրագործությունն է։

4. Կշռադատում

Դասարանը վիճակահանությամբ բաժանվում է երեք խմբի։ Խմբերից յուրաքանչյուրն իր առաջադրանքն ընտրում է «Էպոս» թեմատիկ պաստառից, որի վրա կա երեք գունաթերթ՝ յուրաքանչյուրում մեկ առաջադրանք։

-Առաջին խումբը գրում է անվանակապ **Էպոս** բառով։

-**Է**սպես եկա դարերից,

Պարգև դարձա ձեզ համար,

Ոսոխներին հաղթեցի,

Սիրով Սասնա ծռերի։

-Երկրորդ խումբը գրում է կենսագրական բանաստեղծություն։

Ես - էպոս

Բնավորությունս - պարզ, միամիտ, մի քիչ ծուռ

Ազգականներս - զրույցներ, առասպելներ, ավանդավեպեր։

Զգում եմ –ջերմություն

Կարիք ունեմ- ընթերցասեր երեխաների

Վախենում եմ – նենգ մարդկանցից

Տալիս եմ – գիտելիք

Ուզում եմ – ինձնից սովորեն

Բնակվում եմ – գրքերում

Ազգանունս – Էպոսյան

5. Առաջադրանքի ներկայացում

ա)պատահականորեն ընտրված աշակերտը ներկայացնում է

բ)լրացումներ խմբի մյուս անդամների կողմից

6. Գնահատում

ա) գնահատել այն անդամին, որը ներկայացրել է թեման

բ)գնահատել խմբին, որը ճիշտ է ներկայացրել թեման

7. Աշխատանքները ցուցադրել դասասենյակում

8. Հաջորդ դասին կատարել անդրադարձ

Եթե Դավիթը զգայուն է, սիրում է Սասնա տանտիկիններին, աղջիկներին, որոնք իր համար եղել են մայրեր և քույրեր, ապա Մելիքը բիրտ ու անզգա մարդ է. նույնիսկ նրան քնից արթնացնելու համար հարկ է դիմել ծայրահեղ միջոցների: Ահա թե ինչ չափազանցված ձևերով են Մելիքին արթնացնում.

Էլան՝ շամփուր կարմրցուցին,
Դրին Մելիքի ոտների տակ:
Ասաց.- Օ՛ֆ, աղջիկներ,
Ինչի՞ իմ տեղ լավ չէք շինե.
Էո՛ւ կա իմ տեղ, ինձ կը խածե:
Ասաց, էլի մնաց քնուկ:

«Սասունցի Դավիթ» էպոսում հայ ժողովուրդն օգտագործել է հումորն ու սպանիչ սարկազմը: Մտերմական հումորով ծաղրվում է Սասունցի Դավիթը, իսկ սպանիչ ծաղրով ներկայացվում են Մսրա հարկահանների պարագլուխը՝ Կոզբադինը, նաև Մսրա Մելիքը: Դավիթը պատանի հասակում դառնում է գառնարած, սակայն գառների և ուլերի հետ սարից բերում է նապաստակներ ու աղվեսներ.

Դավիթ մըտավ էդ քարայր,
Փետ մի զարկեց. մեկ էս քարին, մեկ էն քարին.
Կուզեր, աղվես, նապաստակներ ամեն դո՛ւրս թափվան:
Ձենով Հովան տեսավ՝ աղվեսներո՛ւն,
Նապաստակներուն կ’ասի Դավիթ ըսպիտակ ուլ:
Նապաստակներ, աղվեսներ ամեն փախան:

Սարկազմով արաբ կանայք ծաղրում են Կոզբադնին, որը պատռված գլխով ու ձեռնունայն վերադառնում է Սասունից.

- Այ, Կոզբադին, մեծաբերան,
Կերթիր Սասուն՝ բերես թալան՝
Քառսուն էրկեն կնկտիք բերես՝ ուղտեր բառնան,
Քառսուն կարճլիկ կնկտիք բերես՝ էրկանք աղան,
Քառսուն կույս աղջիկ բերես արմաղան,
Քառսուն բեռով ոսկի, արծաթ բերես թալան...
Իդա դիհեն գացիր՝ քանց գել գազան,
Ու էն դիհեն էկար՝ քանց շուն վազան:

Այսօրինակ հակադրություններն առկա են բանահյուսական շատ գործերում: Ինչպես օրինակ՝ նմանատիպ խիստ հակադրություններ կան «Հայկ և Բել» առասպելում (Հայկի և Բելի), «Արա Գեղեցիկ և Շամիրամ» (Արայի և Շամիրամի), «Տիգրան և Աժդահակ» (Տիգրանի և Աժդահակի): Ուսուցանողը գլխավոր հերոսների խիստ հակադրման սկզբունքի համար օգտագործում է Վենի դիագրամը, որի միջոցով հենց աշակերտը կարող է առանձնացնել Սասունցի Դավթի և Մսրա Մելիքի բնավորության հակառակ գծերը:

«Սասունցի Դավիթ» էպոսում չափազանց շատ են համեմատությունները: Մսրա Մելիքի զորքը համեմատվում է ծովի ավազի հետ. այն շատ բազմամարդ է: Դավիթը մտածում է, որ եթե ինքը դառնա քաղցած գայլ, իսկ Մելիքի զորքը՝ մատղաշ գառներ,ապա չի կարողանա նրանց խեղդել, կամ եթե Մելիքի զորքի անհամար վրանները դառնան խոտի դեզեր, դարձյալ չի կարող դրանք վառել, եթե նույնիսկ այդ վրանները դառնան մոխիր, և ինքը՝ քամի, նորից անհնար է այդքան մոխիրը տեղից շարժել: Հայկական հերոսական էպոսը ասացողների տարբեր սերունդներ հղկել են, բյուրեղացրել, պատումի ընթացքը դարձրել հստակ, տպավորիչ ու վարակիչ: Ամեն ազգի էպոս դարերով մշակված և փայփայված մտքի ու զգացմունքների կրողն է: «Սասունցի Դավիթ» էպոսն ընթերցողին կամ լսողին պատճառում է գեղագիտական հաճույք: Նշանավոր ֆրանսիացի գրող Ռոմեն Ռոլանը նիդեռլանդական էպոսի՝ «Տիլ Ուլենշպիգելի» մասին ասում է. «Այն ազատության դյուցազնական ձայնն է»: Նույնը պատշաճ է կրկնել «Սասունցի Դավիթ» էպոսի համար, որը ոչ միայն հայ ժողովրդի ազատության դյուցազնական ձայնն է, այլև երբեք չլռող սթափեցման կոչ՝ ուղղված աշխարհի ժողովուրդներին, որոնք իրականում կարող են ապրել խաղաղության ու փոխըմբռնման մթնոլորտում:

Լուսանկար՝ «Սասունցի Դավիթ» (Հայ ժողովրդական մեծ էպոս)

Եզրակացություն

Այսպիսով եզրահանգում կատարեցինք, որ հայկական հերոսական էպոսն ունի բացառիկ հարուստ գաղափարախոսություն: Այս գաղափարախոսության ողջ բովանդակությունը մնում է որպես մշտական պահանջ ուղղված ոչ միայն հայ ժողովրդին, այլևս համայն մարդկությանը:

«Սասունցի Դավիթ» էպոսի ուսուցումը հնարավորություն է տալիս դասի ժամանակ ուշադրության կենտրոնում պահել ողջ դասարանը, անցկացնել աշակերտակենտրոն դասերը: Դասը պարտադիր է վարել հետաքրքիր, աշխույժ. այդ հնարավորություն է ընձեռում գրական այս հուշարձանի հետաքրքրաշարժ բովանդակությունը:

Լևոն Շանթը, որը նաև հմուտ մանկավարժ էր ու կրթության գործի երկարամյա կազմակերպիչ, կարևորում էր ազգային նշանավոր դեմքերի, պատմական գիտելիքների ուսուցումը հայկական դպրոցներում.

«Մեզի շրջապատող և մեզի հետ դարերու ընթացքին շփման մեջ եղող բազմաթիվ հին ու նոր ժողովուրդներու մասին կհիշվի, բազմատեսակ ընդհանուր պատմական երևույթներու և շարժումներու մասին կխոսվի, ինչպես, օրինակ՝ նախարարակն ավատական կապերն են կամ խաչակիրներու արշավը, հույն –սասանական մրցակցությունը, քրիստոնեության ու մահմեդականության ծագումը և ուրիշ»:[12]

Լ. Շանթի այս ցուցումը լիովին կիրառելի է «Սասունցի Դավիթ» էպոսն ուսուցանելիս: «Սասունցի Դավիթ» էպոսի պատգամների միջոցով հայկական դպրոցներում կդաստիարակվեն ազգային ու համամարդկային ճիշտ գաղափարներով զինված քաղաքացիներ:

Այս հետազոտական աշխատանքը շոշափում է մի այնպիսի թեմա, որը բացառիկ դեր ունի Հայաստանի և հայ ժողովրդի համար: Խոսքը գնում է էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման մասին: Սովորողները դպրոցում Հայ գրականություն ծրագրի շրջանակներում ծանոթանում են մեր ժողովրդի ստեղծած գեղարվեստական արժեքներին և համամարդկային նվաճումների, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրիդ դժվարություններին ու կորուստներին: Ուսուցիչը ձգտում է այն բանին, որ դեռահասները, պատանիներն ու աղջիկները արիաբար ու ազնվորեն մտածեն ամենադժվար, ամենաբարդ պրոբլեմների մասին, որոնց հիմքը կազմում են հայրենասաիրական զգացմունքների ու համոզմունքների ակունքները, իդեալին նվիրված ու հավատարիմ լինելու ակունքները:

Ուսուցիչը ժամանակ առ ժամանակ, աշակերտներին պատմում է ոչ միայն անցյալի, այլև կյանքի վառ պատմություններ, որոնց գլխավոր դերը կյանքի վառ պատմություններ, որոնց գլխավոր դերը մտքին սնունդ տալիս է, հայրենասիրական զգացմունքներ և համոզվածություն ձևավորելը, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգին մեծ ուշադրության դարձնելը:

Հայրենիքի անցյալին, ներկային և ապագային վերաբերող գիտելքիները պետք է տոգորված լինեն մարդու անձնական զգացմունքների և ապրումների թրթիռով, - միայն այս դեպքում են պատմական հերոսները կենդանանում և դառնում մեր կողքին մատնող հզոր հսկաներ: Ուստի ժամանակակից դպրոցի գերխնդիրն է ուշադրություն դարձնել ազգային արժեհամակարգի ձևավորմանը և սովորողներին դաստիարակել ազգային հոգևոր-բարոյական ընդհանրականության հիմքի վրա:

[12] Լ. Շանթ, Երկերի ժողովածու, հ V, Երևան, 2012, էջ 498:

Արժեհամակարգի ձևավորման և նրան հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, հատկապես՝ հայ գրականության առարկան։ Դպրոցում սովորողները հայ գրականության ծրագրի շրջանակներում ծանոթանում են հազարամյակների կենսագրություն ունեցող հայկական քաղաքակրթությանը, ստեղծած արժեքներին և համամարդկային նվաճումներին, ինչպես նաև՝ այդ ճանապարհին հայ ժողովրդի դժվարությունների ու կորստներին։ Հայ գրականություն առարկայի ուսումնասիրման շնորհիվ ձևավորում է ազգային դիմագիծ, հայոց ազգային և համամարդկային արժեհամակարգը կրող պատասխանատու անձ ու քաղաքացի։ Այդ իսկ պատճառով անգամ էպոսի միջոցով հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և ձևավորումը պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում։

Օգտագործված գրականություն

ա)հայերեն

1. Գ.Սրվանձտյանց, Երկեր, հ.1, Երևան, 1978
2. Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան
3. Լ.Շանթ, Երկերի ժողովածու, Երևան, 2012,
4. Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, Երևան, 1959
5. Հովսեթ Օրբելի «Հայկական հերոսական էպոսը» (հատվածներ) Հայ գրականության քրեստոմատիա, Երևան, 1992
6. Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1984
7. Ղևոնդ, Պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Արամ ՏերՂևոնդյանի, Երևան, 1982
8. «Սասունցի Դավիթ», Երևան, 1961թ

բ)ռուսերեն

1. П.Н.Сакулин, Наука о литературе, ее итоги и перспективы, Москва, 2011
2. Н.М.Шанский, Ш.А.Мамедов, Филологический анализ художественного текста, Москва, 2010